ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/2.6-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. փետրվարի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:

2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:

3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 6 հայտ՝

- «Թայմ» ՍՊԸ-ի,
- «Ֆորմիկա Արտ» ՍՊԸ-ի,
- «Օրդեր ֆիլմ փրոդաքշն»-ի,
- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- Արմեն Գալոյան ԱՁ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի կողմից:

Լսեցին՝

Հայտի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2025թ. փետրվարի 26-ը, ժամը 15^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2025թ. փետրվարի 26-ին, ժամը 17^{00}-ին:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____